

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Հայոց ցեղասպանություն. հայասպանություն՝ ամենացեղասպան ցեղասպանություն. աշխարհի տասը լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, թուրքերեն, ճապոներեն, հունգարերեն, հայերեն, արաբերեն, պարսկերեն, *Երևան, «Չանգակ-97» հրատ., 2009, 856 էջ:*

Անվանի արևելագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն. հայասպանություն՝ ամենացեղասպան ցեղասպանություն» տասը լեզուներով հրատարակված մենագրությունը կարելի է դասել Մեծ եղեռնին նվիրված վերջին տարիներին լույս տեսած ամենահաջող գրքերի շարքին: Հեղինակը բազմապիսի և բազմալեզու աղբյուրների գիտական խորը վերլուծության հիման վրա ներկայացնում է անժխտելի փաստեր, որ 1915 թ. Հայոց ցեղասպանությունը նախօրոք ծրագրված և մշակված պետական քաղաքականության մի մաս է կազմել, որի նպատակն էր էթնիկական այլ տարրերից մաքրված, հոմոգենիկ թուրքական տարածք ստեղծումը: Այդ նույն քաղաքականությունն իր շարունակություն է ունեցել նաև հանրապետական Թուրքիայում, և հայերի ճակատագրին են արժանացել նաև ասորիները, հույները, քրդերը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի խոչընդոտման քաղաքականությունում թուրքական գիտական մտքի և քարոզչության հիմնական փաստարկներից մեկն այն է, որ 1915 թ. դեպքերը որպես ցեղասպանություն որակավորման ապացույց բերվում են փաստարկներ և հուշեր, որոնք իբր կողմնակալ են, լույս են տեսել կամ մշակվել Օսմանյան կայսրության հետ պատերազմ վարող Անտանտի պետությունների կողմից կամ հայկական ծագում ունեն: Նման մեղադրանքներ կայացվում է նույնիսկ Օսմանյան կայսրությունում այն ժամանակվա ԱՄՆ-ի դեսպան, հայերի ցեղասպանության ականատես Հենրի Մորգենթաուի հուշերին, որոնք

իբր թե ամբողջովին հիմնված են իր երկու քարտուղարի և թարգմանիչների, ազգությամբ հայերի պատմաձևների վրա:

Այս տեսակետից Ն. Հովհաննիսյանի աշխատությունը բացի գիտական բարձր արժեքից ունի նաև կիրառական մեծ նշանակություն, և հարկ է այն օգտագործել քարոզչական նպատակով: Հեղինակն իր ուսումնասիրությունը գրելիս, այլ աղբյուրների հետ օգտագործել է նաև արաբական սկզբնաղբյուրներ, որոնց չի կարելի կողմնակալ կամ սուբյեկտիվ համարել, քանի որ արաբական վիլայեթներն այն պահին Օսմանյան կայսրության մաս էին կազմում: Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրած արաբ հեղինակներից ոմանք երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» (Իթթի-հաթ վե Թերաքքի) կուսակցության անդամ են եղել, այսինքն՝ խնդրին քաջաձանոթ էին Իթթի-հաթի ներքին շրջանակներից և կուսակցական փաստաթղթերից: Հեղինակը չի սահմանափակվում միայն փաստագրական վկայություններով, այլ շարունակելով թեման, իր «Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո» աշխատությունում «Արաբական պատմաբաններն ընդդեմ հայերի «դավաճանության» և «ապստամբության» երիտթուրքերի վարկածի» արժեքավոր գլուխ է ներառում, ուր հանգամանակից ներկայացվում են փաստեր և վկայություններ, որոնք ապացուցում են մեր օրերում ևս թուրք պատմաբանների ու քաղաքական գործիչների կողմից օգտագործվող «հայերի դավաճանության և Անտանտի հետ համագործակցության» մեղադրանքի անհիմն լինելը:

Թուրքական պատմագրությունում ակտիվորեն քննարկվում է նաև առաջին հա-

մաշխարհային պատերազմի ժամանակ Միրիայի փոխարքա և ռազմածովային նախարար Ջեմալ փաշայի հայափրկման, մարդասիրական գործունեությունը: Չժխտելով Ջեմալ փաշայի մարդասիրական զգացմունքները՝ հարկ է նշել նաև այն հանգամանքը, որ Ջեմալ փաշան նման գործունեություն ծավալելիս առաջնորդվում էր առաջին հերթին զուտ պրակտիկ, քաղաքական դրդապատճառներով. տեղահանված հայերի որոշ զանգված՝ առաջին հերթին արհեստավորներին, Միրիայում և Լիբանանում բնակեցնելու ձգտումը նպատակ էր հետապնդում թուլացնել արաբական տարրը և ի դեմս հայերի հակակշիռ ստեղծել: Այդ հանգամանքն ընդունում են նաև որոշ թուրք պատմաբաններ՝ նշելով, որ «Ջեմալ փաշան փրկում էր հայերին ոչ թե նրաց սիրելու, այլ արաբներին չսիրելու պատճառով»: Աշխատությունը վկայում է, որ հայ և արաբ ժողովուրդների միջև թշնամություն սերմանելու Ջեմալ փաշայի հաշվարկներն անցել են ապարդյուն:

Ն. Հովհաննիսյանի մենագրությունը գիտական նորույթ է և արժեքավոր է նաև նրանով, որ բերված փաստերը միանշանակ վկայում են, որ 1915 թ. Հայոց ցեղասպանությունը կրոնական բնույթ չունեի, խոսքը քրիստոնյանների և մահմեդականների միջև տարաձայնությունների կամ թշնամության մասին չէր: Բազմաթիվ արաբ ընտանիքներ ապաստան տվեցին Միրիայի անապատները քշված հայերին: Արաբական աղբյուրները վկայում են, որ խնդրի հիմքում ընկած են քաղաքական և ազգային պատճառներ: Թուրքական ազգայնականության գոհ դարձավ նաև կայսրության արաբ բնակչությունը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Միրիայում և Լիբանանում թուրքական իշխանությունների հալածանքների արդյունքում մի շարք վայրերի արաբ բնակչությունը ոչնչացվեց, արաբ մտավորականներից և քաղաքական գործիչներից շատերը կախադան բարձրացվեցին: Ջեմալ փաշայի հակաարաբական գործունեությունն էր պատճառը, որ 1922 թ. Թիֆլիսում հայ վրիժառուների կողմից Ջեմալի սպանությունը լայն արձագանք ստացավ Միրիայում և Լի-

բանանում. բազմաթիվ արաբ հեղինակներ նշում էին, որ հայերը ոչ միայն իրենց այլ նաև արաբների վրեժը լուծեցին:

Հեղինակն աշխատությունում Հայոց ցեղասպանության վերաբերյալ արաբ հեղինակների ուսումնասիրությունների դասակարգում է սահմանում, ինչը թույլ է տալիս հստակ տարանջատել նրանք, որոնց ուսումնասիրման առանցքը «արմենոցիդն» է, այն հուշերից և այլ խնդիրներին նվիրված գիտական հետազոտություններից, որոնցում անդրադարձ է կատարվում նաև Մեծ եղեռնի խնդրին:

Ն. Հովհաննիսյանը՝ վաստակաշատ արևելագետ-միջազգայնագետը, հայ պատմագրության մեջ առաջին անգամ բազմակողմանի գիտական վերլուծություն է կատարել՝ ներկայացնելով Հայոց ցեղասպանության պատճառների լուսաբանումը: Ուսումնասիրության մեջ վերլուծվում են օսմանիզմի, թուրքիզմի (պանթուրքիզմի) գաղափարախոսությունների ազդեցությունը, հայերի թուրքացման փորձի անհաջողությունը և Արևմտյան Հայաստանի անջատման վտանգը կործանվող կայսրության համար: Ն. Հովհաննիսյանը ներկայացնում է, որ արաբական պատմագրությունում առանձնահատուկ ուշադրություն է դարգվում պանթուրանիզմի ծրագրերում հայկական պատնեշի վերացման անհրաժեշտությանը: Ընդհանուր առմամբ, հեղինակը գիտական խորը և բազմակողմանի վերլուծությամբ մանրակրկիտ ներկայացնում է Եղեռնի նախադրյալների, դրդապատճառների, քաղաքական և էթնիկական ազդակների նշանակությունը Հայոց ցեղասպանության իրագործման հարցում: Հեղինակը հիմնավորում է Մուսա Պրենսի կողմից մշակված «արմենոցիդ» եզրի գիտական շրջանառության ավելի լայն կիրառման կարևորությունը: Այս եզրը համեմատվում է «Հոլոքոստ» հասկացության հետ և թույլ է տալիս առանձնացնել Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը որպես ցեղասպանագիտության (Genocide studies) առանձին ճյուղ: Հարկ է նշել այն կարևորությունը, որ նման հասկացություն գիտական շրջանառության մեջ դրվում է ոչ հայ գիտնականի կողմից:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն իրողությունը, որ 2005 թ. Ստամբուլում Ն. Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն - արմենոցիդ» գրքի թուրքերեն թարգմանությունը լայն արձագանք գտավ Թուրքիայի գիտական և հասարակական շրջանակներում՝ դառնալով բուռն քննարկումների առարկա: Աշխատությունում բերված սկզբաղբյուրները ի չիք դարձնելով կողմնակալության և ոչ օբյեկտիվության թուրքական մեղադրանքները՝ առիթ տվեցին մեկ անգամ ևս խորհելու թուրք պաշտոնական պատմագրության, այսպես կոչված, անթերիության մասին: Թուրքիայի պաշտոնական գիտական շրջանակները, որոնք արագորեն անդրադառնում են Հայոց ցեղասպանության հարցով յուրաքանչյուր հրատարակությանը և փորձում հերքել այնտեղ բերվող փաստարկները, գերադասեցին լռություն պահել այս հարցում՝ չփորձելով հերքել գրքում բերված գիտականորեն անթերի փաստարկներն ու սկզբնաղբյուրները:

Գրախոսվող աշխատությունը, որն իր նախադեպը չունեցող, ակադեմիական բարձրարժեք ուսումնասիրություն է, իր վրա գրավեց և շարունակում է գրավել միջազգային հասարակության և տարբեր երկրների մասնագետների ուշադրությունը: Ինչի դրսևորումներից մեկն էլ այդ եզակի հետազոտության թարգմանությունն է տարբեր լեզուներով և հրատարակումը Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի և Աֆրիկայի զանազան երկրներում՝ այդ երկրների նախաձեռնությամբ և հոգածությամբ: Այդ առումով դժվար է գուցահեռ անցկացնել այլ հեղինակների՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված որևէ աշխատության հետ:

Միահատորակը, որը ներառում է տասը լեզուներով թարգմանված բնագրեր, մի հուժկու հակահարված կարելի է ասել, մի յուրօրինակ համազարկ է Հայոց ցեղասպանությունը ժխտող թուրքական և նրան ձայնակցող քաղաքական ու «գիտական» ուժերին և ծառայում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ազնիվ նպատակին: Այդ առումով սույն աշխատության գիտական նշանակությունը և քաղաքական կարևորությունն ավելի քան ակնհայտ են:

Կցանկանայինք անդրադառնալ ևս մեկ ուշագրավ հանգամանքի, որի մասին ակնարկվեց վերևում և որի վառ ապացույց է սույն մենագրությունը: Հայոց ցեղասպանության կամ Օսմանյան կայսրության կործանման շրջանին վերաբերող իրադարձությունները լուսաբանելիս՝ հայ պատմաբանների կողմից լայնորեն օգտագործվող ռուսական, անգլիական ու ֆրանսիական աղբյուրների հետ մեկտեղ բազմաքանակ և բազմաբնույթ թուրքական ու արաբական սկզբնաղբյուրների և աշխատությունների օգտագործումը նոր որակ է հաղորդում հայոց ցեղասպանագիտությանը: Դա ի չիք կդարձնի թուրք պատմագրության վերոնշյալ մեղադրանքները, թե հայերն օգտվում են այն ժամանակ Օսմանյան կայսրության հետ պատերազմի մեջ գտնվող Անտանտի երկրների աղբյուրներից, որոնցից շատերը քարոզչական բնույթ ունեն: Անդրադառնալով գերմանական հրապարակումներին և փաստաթղթերին, թուրք պատմաբանները, իսկ վերջերս նաև քաղաքական գործիչները, շատ դեպքերում շանտաժի դիմելով, նշում են, որ Օսմանյան կայսրությունը Գերմանիայի դաշնակիցն էր, ու հայերի տեղահանության որոշումը կայացվել է գերմանացիների խորհրդով և օժանդակությամբ: Այս պայմաններում օսմաներեն և արաբերեն սկզբնաղբյուրների կամ փաստաթղթերի օգտագործումը գիտականից բացի նաև քաղաքական կարևոր նշանակություն է ստանում: Ն. Հովհաննիսյանի աշխատությունները լրացնում են այդ բացը և վկայում Օսմանյան կայսրության XIX–XX դդ. պատմության ուսումնասիրության գործում արաբական սկզբնաղբյուրների դերի կարևորության մասին: Այս աշխատությունը կարևոր նշանակություն ունի Հայոց ցեղասպանության մի շարք դրույթների, օրինակ՝ կրոնական գործոնի կամ հայ տարրը հակակշիռ այլ տարրերի օգտագործման ձգտումների նորովի լուսաբանման հարցում: Համաշխարհային գիտական մտքի կողմից Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրություններին ցուցաբերած հետաքրքրությունը ինքնըստինքյան վկայում է այս ճանապարհի արդյունավետության և ՀՀ արտաքին քաղաքականության առանցքային

ուղղություն հանդիսացող Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը նպաստելու մասին: Հարկ է նշել, որ Ն. Հովհաննիսյանը բազմաթիվ հրավերներ է ստանում և ցանկալի բանախոս է Հայոց ցեղասպանության ինդրին նվիրված միջազգային տարբեր գիտաժողովների:

Ամփոփելով՝ կարելի է վստահորեն հաստատել, որ Նիկոլայ Հովհաննիսյանի

«Հայոց ցեղասպանություն. հայասպանություն. ամենացեղասպան ցեղասպանություն» մենագրությունը, որ ցարդ Հայոց ցեղասպանությանը նվիրված ամենահաջողած գիտական ուսումնասիրություններից մեկն է, նոր, ծանրակշիռ խոսք է ցեղասպանագիտության ոլորտում ընդհանրապես և հայոց ցեղասպանագիտության ոլորտում մասնավորապես:

ԱՐՄԵՆ ԱՎԱԳՅԱՆ